Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երիս եւ կէս արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պահճէ-Գաբուճ ջրավաճառ եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները։

Ծանուցման տողը 3 դուրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տճօրէն-Տէր Հ. Ս. Ալատճատեան կ. Պոլիս Պալըզ-բազար Նահճէյէ խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

ԹԻՒ 2275 Շ Ա Բ Ա Թ 1891 ՀՈԿՏԵՄԲԵՐ 5

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

Ուսուցիչ։ — Մայրաքաղաքիս ուսուցչական դասուն գլխաւորմամբ, ազգային կեդրոնական վարչութեան Ուսումնական Խորհրդոյ տնօրինութեամբ եւ Ա.ԱՆՆ. Ս. Պատրիարք Հօր հաւանութեամբ, վերջին օրերս քանի մը անգամ ժողովելով ի խորհրդարանի Ղալաթիոյ՝ խօսեցան խորհրդակցեցան ուսուցման եղանակի եւ դասագրոց ընտրութեան, ինչպէս նաեւ ուսուցչաց վիճակին վերայ, եւ հուսկ ուրեմն յանձնաժողով մը ընտրեցին՝ ուսուցչական ընկերութեան մը կազմակերպութեան եւ միանգամայն օգնութեան անտուկի մը հաստատութեան վերաբերեալ կանոնական ծրագիր մ'ալ խմբագրելու պաշտօնով։ Ուրիշ քանի մ'անգամ ալ ուսուցչական մարմինն այսպիսի չարժումներ ըրած է, բայց արդիւնք մը չտեսնուելով՝ մեծաց չարունակուած է միեւնոյն վիճակն, որոյ բարւոքման անհրաժեշտ պէտքն ընդհանրապէս զգալի եղած է, եւ մեք չ'ստ անգամ գրած եւ յորդորներ կարդացած եմք բարւոքման միջոցներ տնօրինելու համար։ Մաղթե՛նք որ դէթ այս անգամ կարեւոր արդիւնք ունենան խօսքերն ու խորհրդակցութիւնք, եւ նորընտիր Ուսումնական Խորհուրդն հետեւելով նախորդին գովելի օրինակին ու ընթացիք՝ փոյթ եւ խնամ տանի արդիւնաւորութեան համար։ Նախորդ Ուսումնական Խորհրդոյ տեղապահ Ռեթէոս էֆէնտի Պէրպէրեան՝ հիմնադիր-տնօրէնն Իսկիւտարի գիշերօթիկ եւ ցերեկեայ բազմաժամանակեայ կրթական օգտաշատ հաստատութեան՝ որ ֆաղաքական ժողովոյ անդամ ընտրուելուն պատճառաւ հրաժարեցաւ Ուսումնական խորհրդոյ անդամակցութենէ, կարելի չէ՛ր արդեօք որ այդ կարեւոր խորհրդոյն անդամակցութեան եւ տեսչապետութեան պաշտօնն ալ գոնէ ժամանակ մ'ալ վարէր, եւ իր առաջարկութեամբ սկսուած չարժմանց չարունակութեան եւ արդիւնաւորութեան հսկէր։

Մեք անկասկած եմք թէ՝ երբ արժանաւոր կարօտ ուսուցչաց օգնութեան անտուկ մը հաստատուի ապահովութեան բանաւոր պայմաններով, և ամէն կարգի ուսուցիչք ինքնօգնութեան գեղեցիկ սկզբունքով սկսին տալ սահմանեալ բաժիններ և չարունակեն անընդհատ, ուրիշ կարգի ազգայինք ալ կտակներով և նուէրներով կըճոխացունեն այդ անտուկն, և այնուհետեւ հարկ չլինիր ուսուցչի մը հիւանդութեան առեն ողբովք օգնութիւն հայցել, կամ ուսուցչի մը մահուանէն ետքը նորա որբոց և այրւոյն համար երկնել նպաստ ո-

րոնել մեծաւ աշխատութեամբ։

Ըստ մեզ՝ չատ լաւ կը լինի եթէ միայն գրական գործով զբաղող սակաւաթիւ անձինք ալ յարին ուսուցչական հաստատուելի ընկերութեան, բաժին տան անտուկին, և նոքա ալ ի հարկին այդ անտուկէն օժանդակութիւն վայելելու իրաւունք ունենան։ Այս դիտողութիւնը կընենք և կը բազձամք որ ուշադրութեան արժանանայ, որովհետեւ՝ ինչպէս յայտնի է՝ գրական գործով ապրող պատ ալ ընդհանրապէս օժանդակութեան անկարօտ վիճակի մէջ չգտնուիր դժբազդաբար, և այդ վիճակն առաւել կը ծանրանայ մանաւանդ հիւանդութեան առեն և յետ մահու։ Տխուր ու ցաւալի օրինակներն ակներև պարզուած են։ Ինչ եղաւ արդեօք Պարոնեանի որբոց ու այրւոյն ի նպաստ՝ մեծաւ եռանդեամբ բացուած հանգանակութեան արդիւնքը։ Ինչ կընեն արդեօք Մանավեանի այրին և որբոց խումբն։

Թղթակցութիւն Փունջի

Պրուիհի-Նի-Եորք. 15 Մայիս. 1891։ — Հետեւեալ Թրոյի Հայ գաղթականութեան վերայ հետաքրքրական վիճակագրութիւն մ'է։ — «Առաջին անգամ լինելով՝ 1881 ին երկու Հայք ի քաղաքս Թրոյ եկած են, մին Մարաչէ և միւսն Խարբերդէ։ Այն ժամանակէն ի վեր քաղաքս Հայերը բացակայ չեն եղած։ Մինչև տարի մը յառաջ իրենց թիւն 25է աւելի չէր, բայց արդ մինչև 91 հասած է, որոց 48ը Խուլագեղցի (Խարբերդէ 2 ժամու ճանապարհ հեռի) են. 12ը՝ Խարբերդցի. 12ը՝ Մարղուանցի. 7՝ Ուզունովացի (Բալուայ գայմագամութեան ներքին)։ 5՝ Բալուցի. 3՝ Մոլէցի. 2՝ Մարաչցի. 1՝ Գեղվանքցի՝ (Խարբերդէ 4 ժամու ճանապարհ հեռի). 1՝ Կեսարացի։ Սոյն հաշուոյ մէջ են Մարզուանցի միեւնոյն ընտանեաց վերաբերեալ երկու տիկնայք, երկու տղայք և երիտասարդուհի մի։ Այս ազգայինք կըզբաղին հետեւեալ գործերով. 20 հոգի՝ դուռի գործարանի մէջ. 20՝ երկաթի ճուլարանաց մէջ. 17՝ կոճակի ծակ չինելու։ Գործաւորք իրենց յատուկ մեքենաներ գնած են, զոր կը բանեցունեն իրենց տանց մէջ. այժմ 20 մեքենայից 17ը կը բանի՝ գործի սակաւութեան պատճառաւ։ ԵՒ Հայ ալ պողպատի գործարանի մէջ կը գտնուի. 2՝ թղթի գործարանի մէջ. 2՝ վայրաշարժ մեքենայի գործարանի մէջ. մէկն ալ կոշկակարի խանութ բացաւ մեծերս. իսկ 18ը բաւական ժամանակէ հետէ անգործ կը մնան մասամբ կամ բոլորովին։ Այս ազգայնոց բարոյական ու մտաւորական մըչակութեան համար բաւական հոգ կը տարուի։ Անդղիարէն լեզուն ուսանելու համար գիշերային դպրոց մը խնդրուեցաւ տեղական կառավարութենէն. ընդունուեցաւ այս խնդիրն, և եօթներորդ փողոցի 7 թիւ հանրային դպրոցն նշանակուեցաւ։ Թրոյի Հայք այս պատեհութենէն բոլոր հարկաւոր օգուտն պիտի քաղեն, վասն զի անդղիարէն լեզուի անգէտ Հայոց ցաւալի վիճակն ցոյց կուտայ թէ այլոց միջնորդութեամբ և մեծ գժուարութեամբ գործ գտեր են, բայց դժբազդաբար ո՛չ երկար տեւողութեամբ. և եթէ ոմանք կրցեր են պահել գործն, ա՛յն ալ ստորին վիճակի մէջ մնալու պայմանաւ և ապագային բարւոքելու յոյս չունենալով։ Այս գաղթականութեան սկզբնաւորութիւն ընդ երկու Հայոց մին, Խարբերդցին, որ առաջին կարգի գործաւոր եղած է, վերջին օրերս բամպակի մեքենաներ փոխադրեց իր հայրենիքն, և ինքն ալ ընտանեօք վերադարձաւ։ Այս քաղաքէն եկնող Ընքուչցի Պ. Աւետիս Տակաիկեան, ի Նոկթ Լաէմ Մէսս, կոշկի գործարանի մէջ գրեթէ առաջին գործաւորն է և լաւ դիրք ունի։ Ուրիշ մ'ալ կայ Ընքուչցի՝ որ փիլատելֆիայի (Մէսս) չապկի գործարանին մէջ կաշխատի։ Ըստ մեզ տեղեկութենէ՝ մնտերս պիտի ատուարանայ տեղւոյս Հայ գաղթականութիւն։ Զգիտեմք թէ ինչպէս գործ պիտի գտնուի դոցա համար։

Պաղտգիս. 12 Մայիս. 1891։ — Կ. Պոլսոյ Միացեալ Ընկերութիւն վեց տարիէ հետէ տեղւոյս Ա.րամեան վարժարանը առած է իւր ձեռաց տակ՝ գրեթէ ձրիաբար դաստիարակելով նորա աղքատ մանուկները։ Ա.յս վարժարան չնորհիւ ընկերութեան ունեցաւ իւր ընթացաւարտներ, յորս նշանաւոր է Պ. Յովսէփ Մարուխեան։ Սա իւր բարի բարքով, առաքինի վարքով և ուսումնական յառաջդիմութեամբը մասնաւոր կը լինի տեղւոյս ուսեալ անձնաւորութեանց չարքին մէջ։ Ընկերութիւնն քաջալերեց զնա ոսկի խաչիւ, տուաւ վկայագիր, և երբ ընթացքն աւարտեց նա, ընկերութիւնն արժան տեսաւ անցուցանել ի չարս իւր պաշտօնէից։ Պ. Մարուխեան տակաւին երկուք սուկէս տարի է որ կը պաշտօնավարէ տեղւոյս Միացեալ Ընկերութեան վարժարանի մէջ. այս դոյզն ժամանակի մէջ իւր գովելի ընթացքով և քաղցրիկ բնաւորութեամբ սիրելի դարձած է ամենուն. իւր պաշտօնակիցներ համակիր են իրեն՝ իբրև անկեղծ և հաւատարիմ ընկերի։ Իսկ որ առաւել է՝ աշակերտներ կը պատուեն զինք և կը սիրեն։ Պ. Մարուխեան լաւ ճանչնալով իւր պաշտօնին կոչումն, յաղողած է գրաւել նոցա սիրտեր, խղճի մտօք պաշտօնավարութեամբ, և եռանդուն ու վառվռուն դաստիարակութեամբ։ = Զորրորդ բանակի հրամանատար Վսեմ. Մէհմէտ Զէքի փաշա այժմ ի Տիատին կը գտնուի. մտերս պիտի գայ այսը։ = Տեղւոյս կառավարիչ Վսեմ. Մէհմէտ Ալի փաշա՝ որ ի գաւառս գնացեր էր գիւղօրէից տասանորդն ձերդելու համար, այսօր տեղս եկաւ Վսեմ. Հրամանատարի բնակութեան տեղ պատրաստելու։ = Իւրոյ կիմանամք որ Պարսից հողի վրայ գըտնըուող քուրդք՝ Քըլխըկցի և Խէթեցի Աշիրէթներն կռուի բռնուելով, բազում մարդիկ սպանուեր են, և կռիւն առաւել ծանր և արիւնահեղ պիտի լինի եղեր, եթէ տեղւոյս իշխանութիւնք չարգելեն եղեր օգնութեան երթալ ուղղ Աշիրէթներն։ — Մաժաւն

Բաբերդ. 22 Մայիս. 1891։ — Վիճակիս ազգային գործերն դեռ ևս ոչ ոեւէ յառաջադիմութիւն կրեն, ոչ ալ յոյս մը կայ որ ի մօտոյ ժամանակի ի գործ դրուելով՝ ազգիս Հոգեւոր կանոնաց դասը ընդունի յուսահատեալ, Պատրիարքարանէն հրաման խնդրած է յերընկա վերադառնալու համար։ Ըստ հրամանի Ա.մեն. Ս. Պատրիարք Հօր՝ Տ. Մկրտիչ քահանայն երընկա ղրկուեցաւ. բայց ոմանք տակաւին կաչխատին որ չոյտ վերադարձնեն զնա, և ի զիջումն խոհարհեցուանեն Առաջնորդն ու ծննդիչն. քաղաքիս և գիւղօրէից մէջ կաչխատին որ ժողովուրդը չմանակցի երեսփոխանական ընտրութեանց. քահանայից կը պատուիրեն որ երբեմն հիւանդութիւն կեղծելով պատարագ չմատուցանեն և հետեւաբար չհիշատակեն Առաջնորդին անունն։ Երէկ հանրագիր մը մատուցին Վսեմ. կուսակալ Փաշային, որ 8 օրէ հետէ աստ է և կը քննէ տեղական կառավարութեան ընթացքն։ Ժողովուրդն ի քաղաքիս և ի գիւղոյս՝ ամենքն ալ գաղափարն ունի թէ իւրեանց անդորրութեան միակ դարմանն է խնդրել Պատրիարքարանէ որ Առաջնորդն և Զորպաճի անուանելոց ոմանք կ. Պոլիս կոչուին։ Քահանայք եթէ ուղղութեամբ և խաղաղասիրութեամբ ընթանան, կրնան բաւական օգտակար ըլլալ ժողովրդեան, բայց դժբազդաբար շատ հեռի են այդ ընթացքէն։ Առաջնորդն ալ դըժբազդաբար յիրաւախոհութիւն և ի հաշտասիրութիւն դառնալէ հեռի կը տեսնուի։ Թերևս այսուհետև ընդունի այդ ոգին, և այդու չանայ ժողովրդեան օգտին ու անդորրութեան համար, պակասութեանց ներելով իրը Հայր և հովիւ հեղհոգի, որպէս պարտ է, և անձնական զոհողութիւնները յանձն առնելով, որպէս կը պահանջէ սրբազան կոչումն իւր։

Բաբերդ. 13 Մայիս. 1891։ — Բաղմագիւղն Բաբերդի անցելոյն վրայ պատմութիւնը չատ քիչ բան ըսած է. աւերակներու և ակօսահատեալ գերեզմաններու մասին բան մը չէինք գիտեր. լսածնիս ալ քանի մ'առասպելներ են միայն. այլ գրչագիրք՝ ղրըս գտայ և հետամուտ եմ գտնելու, ոչ սակաւ մխիթարութիւն ընծայեցին մեզ. վասն զի մեր եկեղեցական և աշխարհական նախահարց կրօնասէր, հոգեսէր, ուսումնասէր, մէկ խօսքով՝ օգտակարին վրայ մտածող բարուց պատմութիւնը երեւան կը հանեն, որ ներկային հակապատկերն է. որովհետև մեր ներկայ քաղաքացի կղերին մեծ մասն օրճանոցի յաճախորդ է դարձած և գիւղացի կղերականը գերանդաքաղ մը. մեր մեծատունն յղփացեալ կամապաշտ մը, իսկ հասարակութիւնն՝ հաճոյակատար մը. միայն կանանց դասը չատ քիչ կը նմանի իւր նահապետաց, պատճառն որ այժմեան հոգեսէր կանանց դասը զրկուած են ձեռնտուութեան և նուիրատուութեան միջոցներէ. այս ալ երկար խօսքերով կրնայ բացատրուիլ, զոր կը թողում այլում ժամու։ Արժան կը համարիմ հետզհետէ ի լոյս ածել այն անուններն, որ տքնած ու քրքրտնած են կրօնն ի մեզ վառ պահելու համար, որոց բազում գրչագիրք և հեղինակութիւնք անչուշտ ի կորուստ մատնուած են ժամանակի խանձող խորշակաւ. իսկ գտնուած քանի մը կտորներն ալ կա՛մ գիւղի մը փոշոտ անկիւնը և կա՛մ քաղաքի եկեղեցաց աւանդատուներն կը ծնան. չկայ խնամատար ձեռք մը որ փոշոյ արշաւանքէն փրկէ ծաղկենկար գեղեցկագիր սրբազան մատեանները՝ ղրըս մեր նախնիք ահիւ կը համբուրէին լուսաւոր մտօք, իսկ ներկայ կոյր մոլեռանդներն պահապան ընտրելով հանդերձ անտեղեակ կը ծնան անոնց վիճակէն։

Մաղաքիա վարդապետ. «ի վանս Վահանչինու ի դուռն Ս. Ստեփաննոսի. Ս. Գէորգայ. Ս. Յակոբայ։»

Տ. Աստուածատուր կրօնաւոր «Առաջնորդ ուխտին Վահանչինու»։

«Միաս» Տ. Աստուածատուր
Տ. Խաչատուր
Տ. Մարգիս
Տ. Առաքել
Տ. Սիմէօն

Ա.յս անուններ և ուրիշ «Միաբանք «վանքի միաբանութիւնը կը կազմէին Ջկէ ին, զորս կը գո-

վաբանէ Մաղաքիա վարդապետ իւր յիշատակարաններով՝ « Միեղէն » եղբայր անուանելով զնոսա։

Պետրոս երէց « Քարտուղար » անուանեալ, երեւելի քահանայ մ՚է, որդի Ատոմ քահանայի։

Թէոդորոս դպիր, որդի Պետրոս երիցու. երկոքին գրիչք, նկարիչք և կազմարարք։

Ա֊ծատուր վարդապետ Առաջ. Բաբերդի. Պետրոս երէց կը գովէ զայս իբրև իմաստասէր։

Սարգիս Սարկաւագ Վաղընդայ գիւղացի. Ջի. չինող մի եկեղեցւոյ և աւանդապահ մի Աւետարանի։

Սարգիս վարդապետ. Ջի. գրիչ վերոյիշեալ Աւետարանի յիշատակարանին (այս անձ 6 դն ըլլալ կը թուի)։

Յակոբ երէց. Պիթ. գրիչ « ի վարզեհնաս գիւղ » (այժմ Վարզահան) « ի դուռն Ս. Աստուածածնի, Ս. Գրիգորին, Ս. Նիկողայ, Ս. կարապետին և Ս. Օհաննայ »։ Գիւղին պարոնը « Մամիսէ » և քաղաքինը « Ղորղորէ » իսկ Առաջ. երկրին Յուսիկ Եպիսկոպոս կը յիշուին յետոյ Ջբ. Թուին այլ յիշատակարանով։

Մարտիրոս Դպիր. գրիչ և կազմարար. Ջծթ։

Սրապիոն վարդապետ Վանուց հոգատար. ՊՂԱ. (Այս անձի մասին քննութեան պէտք կայ տակաւին։)

Աւագ Դպիր. յիշատակագիր։ Աստիճանաւոր պաշտօնեայ Ճիկրաչէնի Ս. եկեղեցւոյ. ՌՄԽ։

Սարգիս երէց. Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ քաղաքին. գրիչ Մաշտոցի մը. ՌԼԳ։

Թոդոս [illegible] Դպիր կանուանէ զինքն. Աւետարան մը գրած. « Ս. Դաւիթ » եկեղեցւոյն համար Հալվա գիւղի (այժմ Թրքաբնակ)։ ՌԽԶ։

Դաւիթ Աբեղայ Պղնձավանքէն (Մպեր գաւառ) ձեռագիր մը ունի ի Թայիկ գիւղ։ ՋԾթ.

Դպիր

Ագաեռաչ. 21 Մայ. 1891. — Մէն մի խռովութիւն կամ փոքրիկ խառնակութիւն մը միշտ ծանր հետեւանքներ ունեցած են մեր մէջ. ամենաանհնչան համարուած ո՛ր և է ազգային կամ մասնաւոր իրարանցում մեծ ջլասներ տուած է Ազգին՝ կա՛մ վարչական մարմնոյ անտարբերութեան և կա՛մ յոռի հովուութեանց պատճառաւ։ Շատ անգամ մի քանի աղաներու եսական և ամբիցեան բնութիւնք և անձնական անհեթեթ հաճոյք վեր ի վայր ջրած են աղդին խաղաղ կեանքն, տեղի տալով մեծամեծ խռովութեանց, որոց սոսկալի հետեւանաց մասին՝ եթէ թեթեւ մի ակնարկ նետենք մօտակայ անցեալին վրայ, շուտով կրնանք համոզում գոյացնել, ուր կը տեսնենք թէ՝ նոյն իսկ մեր ձեռքով օգնած և խրախուսած ենք օտար Պրօպականտային։ Վերոյիշեալ անձնան համարուած դէպքերու կարգին մէջ նետուած է և՛ Գոնեայի ազգայնոց խնդիրն. մի քանի ազդեցիկ աղաներ իրենց կամաց ու հաճոյից յաղուրդ տալու համար ժողովուրդն երկուքի բաժնած են. չմնար աղէտ՝ որ մէկ արեան և աւազանի եղբարք չտեղացուներն իրարու դլխուն, որոյ անախորժ հետեւանքն անշուշտ մօտ ժամանակի մէջ պիտի երեւի եթէ առաջքն առնուլ ջանքեր չլինին։ Գործուեայ և ուսեալ առաջնորդի մը կարօտութիւնն զգալի է և անյապաղ ընտրութիւնն անհրաժեշտ։ Ամսոյս 17 ին այսր հասաւ Տարսոնի բողոքական քարոզիչ Պ. Ճիհանեան ընտանեացն, Նէվշէհիրի բողոքական քարոզիչ պատուելի Եղիայի և իւր անօրինութեան ներքև գրաններուած դպրոցի աշակերտաց ոմանց հետ և գնացին ի Նիկէ։ Կըսուի թէ՝ Գոնեայի բոլոր նահանգն չրջելու մտադիր է, անշուշտ քարոզութիւններ ընելու նպատակաւ։ Կը կարծուի թէ պիտի դիւրութիւններ ունենայ Հայաստանեայց եկեղեցիէն գտնել բաւական թուով հայեր՝ օգտուելով նոցա գժտեալ և անհովիւ վիճակէն։ Ինչպէս ուրիշ անդամ գրած ենք, այս կողմերու ժողովուրդն իւր մայրենի լեզուէն զուրկ է. սակայն կրօնասէր լինելով՝ քարոզչի մը կարօտութիւնն միշտ զգալի է, և որ և է քարոզիչ կամ միսիոնար մը ունկնդրելու միշտ պատրաստ։ Մեր հին անհաճոյ սովորութիւններէն է ամէն նորաձեւութեան չուտով սիրահարիլ. բայց բարին կամ չարը ընտրելու մասին շատ ետ մնացած ենք դեռ, որով ամէն մեղ նեղկայացողներն բարեկամ կը կարծենք։ Առանց ցաւ յայտնելու չեմ կարող յիշել թէ Ս. Աստուածածնի տօնին առթիւ եկեղեցին չկար այնքան բազմութիւն որչափ ի ժողովարանի բողոքնարն կը քարոզէր։ — Օգոստ. կայսեր Մուլթան Համիտ Բ. ի գահակալութեան 16րդ տարեդարձն բաւական չքեղ կերպիւ կատարուեցաւ ամսոյս 19 ին։ Երեկոյեան դէմ անթիւ հրայանաձգութիւնք և հրթիռներ աւետեցին օրուան ուրախառիթ հանդէսն. քաղաքիս նշանաւոր փողոցներն և պաշտօնատունը լուսավառեալ էին. քաղաքապետութեան պաշտօնատունը ծաղիկներով և դալարեօք զարդարուած և զինուորական ու Ր֊ժիի պաշտօնատունք ֆոսֆորական նիւթերով լուսաւորուած էին. զինուորական պաշտօնատան դրան ճակատն զետեղուած էր կայսերական թուղթան շրջանակի մէջ մաղթանքներով։ Տեղական նուագարաններն և թմբուկներն մինչև կէս գիշեր ժողովրդեան խրախճանաց վկայներն էին։ — Մի քանի աննշան անձրևաց պատճառաւ այս օրեր օդը մի քիչ զովացաւ. սակայն տօթակէզ ամառը արդէն ներգործած լինելով իւր ազդեցութիւն, սոսկալի չերմ և վորհարութիւն կը տիրեն ժողովրդեան մէջ։ — Անցեալ շաբաթ տասանորդի տրոց աճուրդն կատարուեցաւ. 2 միլիոն ղրչի մօտ հասոյթ գոյացած է։ Անցեալ տարիներու մէջ 1 միլիոն ղրչէ աւելի չէր տեսնուած; կըսեն։ Բերքերն առատ և աժան են։

ՍԱԶԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաղտատի առաջնորդարանէն գրուեր է ի Պատրիարքարան թէ՝ Պասրայի եկեղեցւոյ Տ. Անդրէասի պաշտօնավարութեան ընթացքն չատ անհաճոյ և անտանելի եղած է, և հետևաբար հարկ անհրաժեշտ է Պասրայէն անյապաղ հանել յիշեալ քահանայն։

— Մշոյ Ս. Կարապետի վանուց Միաբաններէն Շահնազարեան Տ. Խորէն վարդապետ օգտվոխութեան և դարմանի համար դարձեալ Թոյլտուութիւն խընդրեր է Պատրիարքարանէ, բայց Աչեն. Ս. Պատրիարք Հայրը գիտնալով որ այս վարդապետն կըմբոստանայ ընդդէմ հոգևոր իշխանութեան տեղւոյն, և օգտվոխութեան ու դարմանի պատրուակաւ կը փորձէ հեռանալ վանքէն, — գրեր է առ նա որ ուղղութեամբ ճնայ և որոշեալ տեղն երթայ պաշտօնավարէ։

— Գոհութեամբ կիմանամք որ Մշոյ Ս. Կարապետ վանուց միաբան Կարապետ վարդապետ Եսայեան վերջապես յանձն առեր է ի Խնուս երթալ փոխառաջնորդութեան պաշտօնով, ըստ տնօրինութեան Գեր. Վանահայր-Առաջնորդի Մըշոյ։

— Քաղաքական ժողովն չորեքշաբթի աւուր նստին մէջ որոշեց խառն յանձնաժողով մը կարգել՝ կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն վերայ աղգային վարչութեան կարծիքն ու դիտողութիւնները խմբագրելու և տեղեկագրելու պաշտօնով։ Այդ տեղեկագիրը պիտի մատուցուի Ազգային ժողովոյ։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն նկատելով որ կաթողիկոսական ընտրութեան ստմանակը կը մերձենայ, և Ռուսիոյ ազգայինք արդէն սկսած են ընտրական նախապատրաստութեանց, — գրեց առ կաթողիկոսական Գեր. Տեղակալն՝ փութացունել Թուրքիոյ Հայոց համար ընտրական հրաւիրագրերն։ Նորին Բարձր Սրբազնութիւն խնդրեց նաև որ էջմիածնի Միաբան և Սինհոդական Հարք սիրով և խաղաղութեամբ վարուին մեկմեկու հետ, և անձնուիրութեամբ նախանձախնդիր լինին եկեղեցւոյ շահուց։

— Կոստանդնուպոլսոյ ժողովն երեքշաբթի աւուր նստին մէջ որոշեց 15 օր փիլոնաղուրկ ընել Տրապիզոնի Տ. Մեսրոպ Եպիսկոպոսի, որ՝ ըստ տեղեկութեան կրօնական ժողովոյ տեղւոյն՝ երկու մերձաւոր ազգականներ պսակեր է սխալ ծանօթութիւն տալով առաջնորդական տեղապահին։ Այս առթիւ որոշեց նաև գրել ի Տրապիզոն որ այսուհետև նշանախօսութեան և պսակի հրամաններն կրօնական ժողովոյ գիտութեամբ տրուին։ Ժողովն նոյն նստին մէջ իմանալով որ Ռումանիոյ բրեշլ քաղաքի եկեղեցին քահանայ չունի, և տեղւոյն ազգայինք՝ իբր 14 ընտանիք՝ զուրկ կը մնան եկեղեցական արարողութիւններէ, — պատրիարքական Գեր. Փոխանորդին յանձնեց տնօրինել զարժանն։ Դարձեալ նոյն նստին մէջ տնօրինեց Սերբաստիոյ Գեր. Առաջնորդին յանձնել նոյն վիճակի Պիտկեօղ գիւղի ազգայնոց հանրագիրն, որով խնդրած են իրենց գիւղի համար քահանայ ձեռնադրել Տիրացու Վարդան Տ. Մարտիրոսեանը։

— Ղամն. Ս. Պատրիարք Հայրն չնորհակալեաց և մաղթանաց ուղերձ մատոյց Օգոստ. Սուլթանի, որ հաճեցաւ ներումն չնորհել յիշատակ և ի վան բանտարկեալ 20 ի չափ Հայոց։ Վանայ պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Յովհէփ վարդապետ ալ բարեմաղթութեամբ կը հռչակէ Նորին Վեհափառութեան այս չնորհն։

— Եգիպտոսի Հայոց Նորընտիր Առաջնորդ Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդապետ Իւթիւճեան առաջիկայ չորեքշաբթի կուսակրի իպայշոնավարին։ Անդորր ուղևորութիւն կը մաղթեմք և յաջող արդիւնաւոր պաշտօնավարութիւն։

— Կէտիկփաշայի եկեղեցւոյ քարոզիչ կարգեցաւ Արժ. Տ. Յովհաննէս վարդապետ Արշարունի, որ բաւական ժամանակ այս պաշտօնն եչնիգափուի եկեղեցւոյ մէջ կը վարեր և այս օրերս հրաժարեցաւ։

— Պատրիարքարանն իմանալով որ կեսարիոյ Ս. Դանիել վանքէն ներսես անուն արեղայ մը վանահօր հետ գժտելով՝ կ. Պոլիս եկած է և յերուսաղէմ պիտի երթայ, — հրամայեց յիշեալ վարդապետի վերադառնալ ի կեսարիա, և հնազանդելով վանահօր՝ ծեալ ընդ տրամադրութեամբ նորա։

— Քաղաքական ժողովն վերջընթեր նստին մէջ իւր անդամակիցներէն Եուսուֆեան Տիգրան և Թորոսեան Յովհաննէս էֆէնտիներու յանձներ է՝ Պատրիարքարանի դատական խորհրդոյ համար դատավարութեան եղանակ մը ձրագրել։

— Ղալաթիոյ կիրակնօրեայ վարժարանն՝ որ բաւական ժամանակէ հետէ փակեալ էր, անցեալ կիւրակէ վերաբացուեցաւ, և 20 ի չափ գաւառացիք աշակերտեցան։

— Արապկիրի Նորընտիր պատրիարքական փոխանորդ Արժ. Տ. Մովսէս Ծ. վարդապետ կէօմրիւքճեան մնաւոս կուսակրի ի պաշտօնավայրն։ Պաշտօնական գրութիւնք պատրաստեալ են։

— Տատեան Առաքել պէյի փեսայ Տ. Աւետար տը Սավալան Խան՝ Ռուսիոյ ազգայնոց երեւելիներէն ուսեալ և մեծարոյ անձ մըն, երեքշաբթի Ա. յսթէֆանոյի մէջ մեռաւ 38 տարեկան, և հինգշաբթի մեծաւ չքով կատարուեցաւ յուղարկաւորութեան հանդէսն։ Ի սկզբան պատմուեցաւ թէ Պ. Սավալան Խան յիշեալ գիւղի կողմն իւր ագարակին մէջ պահապանին հետ խօսակցելու ատեն, պահապանին մէջքի հրացինուց մին դիպուածով պայթեր, և գնտակը Սավալան Խանի կողը մտնելով, խեղճը գետին փռուեր և քանի մը ժամ ետքը մեռեր է։ Իսկ ապա կասկած երևան եկաւ թէ Սավալան Խան սպանուած է կանխամտածութեամբ, և թէ նոյն ինքն Սավալան Խան իւր վիրաւորեալ վիճակին մէջ բաւական ճշդեր է այդ կասկածն։ Քննութիւն բացուած է կառավարութեան կողմանէ։ Հանգուցեալն ամուսնին՝ որ առ ի դարման անձին յԵւրոպա կը գտնուեր բաւական ժամանակէ հետէ, ի Կ. Պոլիս ուղևորեր է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Մէվլուտի (Ծնունդ Մարգարէին) տօնի առթիւ վարչական, դինուորական և կրօնական մեծամեծ կայսերական պալատն գնացին ի չնորհաւորութիւն, և առաջին սենեկապետ Պէյի միջոցաւ Նորին Վեհափառութեան մեծարանաց արժանացան։ Այս տօնի առթիւ երեկ աւելի չքեղ եղաւ ուրբաթու աղօթից հանդէսն, և ի գարձի Նորին Վեհափառութեան ղօրանդես կատարուեցաւ։ Բազմութիւն ժողովրդեան ամէն ուրեք խռնեալ էր, և դեսպանք և այլ նշանաւոր անձինք ի տես եկած էին։

— Պետական խորհրդոյ նախորդ նախագահ Արիֆի և կրթական գործոց նախորդ նախարար Մխիթիֆ փաշայից համար ամանթոշակ սահմանուեցաւ։

— Առ դինուորական հրամանատարս հեռագրով հրամայեցաւ, որ այս տարի դինուորական ծառայութեան փոխարէն առնուած դրամն ուղղակի սպարապետութեան Դուռը ղրկուի։

— Եղեռնագործ ատեաններու առջև դատ վարելու արտօնութիւն ունեցող փաստաբանք եթէ այսուհետև այդ դատարաններէն կոչուին յօգնութիւն պաշտպանութեան ամբաստանելոց, և առանց բանաւոր պայմանի ներկայ չգտնուելով արգելք լինին դատարանաց գործառնութեանց, — այնպիսեաց թոյլ չպիտի տրուի փաստաբանութեան պաշտօն վարել ուրիշ դատարանաց առջև։

— Վիէննայի օսմանեան դեսպանի խորհրդական Պասրի պէյի ամանթոշակին վերայ՝ 1000, և հիւպատոսարանի նոտար Պ. Պարպերի ամանթոշակին վերայ 700 ղրչի աւելցաւ։

— Հեռագրութեան և թղթատարութեան վերատեսչի խորհրդական գերմանացի Գրոլ էֆէնտիի պաշտօնավարութեան պայմանաժամն լրացած լինելով՝ պայմանագիրն վերանորոգեցաւ։

— Երեքշաբթի մէկ մէկ ամանթոշակ տրուեցաւ կառավարութեան պաշտօնէից և զօրաց։

— Թուրք լրագրաց մէջ երէկ հրատարակեալ պաշտօնական յայտարարութենէ մը կիմացուի թէ՝ եէմէնի կուսակալ Հասան Խոտիպ փաշա Մայ. 28 թուով հեռագրեր է ի կայսերական պալատն թէ յերկրագակը չկրնալով դիմադրել զօրաց քաջութեան, նուաճուեր փախեր են, և զինուորք յաղթականաւ մտեր են ի Սանաա, և անդ պաշարեալ կառավարական բոլոր պաշտօնեայք. հրամանատարք, զինուորք և ժողովուրդք ուրախութեամբ բարեմաղթութիւններ ըրեր են Օգոստ. Սուլթանի համար։

— Սարաֆօղլու Նազար անուն կեսարացի մը կեսարացի կինոջ մը ստացուածքն այլևայլ պատրուակաւ իւրացունելով՝ վճառեր փախեր է, և կինը կ. Պոլիս գալով ղնազար գտեր և դատ բացեր է։

— Պնակեղինաց ծանօթ վաճառական Պ. Վալտեր քանի մ՚օրէ հետէ անյայտ եղած է, տունը նամակ մը թողլով և այնու ծանուցանելով թէ ինքզինքն ծովը պիտի նետէ։

— Եւդոկիոյ նախորդ կառավարիչ Լութֆի էֆէնտի մեռաւ։

— Ադրիանուպոլսոյ բանակին

հրամանատար վէյսել փաշա՝ որ Համիտ յառաջ առ ի գարման մայրաքաղաքս գալով յերէն գիւղ հաստատուած էր, մեռաւ և յուղարկաւորութեան ծախքը տրուեցաւ կայսերական անձնական գանձէն։

— Ի Բերա Մեծ փողոցին վերայ քսակահատ մը ամենայն ճարտարութեամբ մէկուն ժամացոյցը գողնալէն ետքը տեսնելով որ անարժէք բան մ'է, տիրոջը տըուեր և անցեր գնացեր է։

— Իսկիւտարի Սէլամիյէ թաղի մէջ կարապետ անուն մարդ մը գինետունը նստած առեն յընկերակցութիւն կը հրաւիրէ Տիգրան անուն մէկը. սա նախատաւնօք չընդունիր հրաւէրն, և վատ գոչելով՝ գաւաթ մը կը նետէ կարապետի դլուխն և կը փախչի։ կարապետ չարաչար վիրաւորեալ՝ տունը կը տարուի և քանի մը վայրկեան ետքը կը մեռնի։ Տիգրան դեռ բռնուած չէ,

— Թարապիայի մէջ յոյն կոշկակարի մը 16 տարեկան աղջիկն հորէն ջուր քաշելու ատեն մէջը ինկեր խեղդուեր է։

— Անցեալ ուրբաթու աղօթից հանդիսին ներկայ գանուեցան երկու չինացի մահմետականք, որ իրենց երկրէն եկեր են յատկապէս մայրաքաղաքս տեսնելու և ապա Հիճազ երթալու համար։

— Ի Ղալաթիա մորթի վաճառական Նիքոլի՝ անցեալ ուրբաթ առաւօտ՝ կնոջն հետ սուրճ խմելէ ետքը, դարձեալ ննջասենեակն եընելով, և ատրճանակ մը պարպելով բերնին մէջ՝ սպաններ է ինքզինքն։ Պատճառն է՝ վերջին օրերս Գոնսոլիտէի գործառնութեամբ քանի մը հարիւր լիրա ջնաս ընելն։

— Ի Բերա Ապանով փողոցը պտըտող խռուահաւաք մը տուն մը մաքրելու համար առեր տարեր են, և անդ երկու մարդիկ ալ միանալով տանողին հետ՝ խեղճին վերայ յարձակեր վիրաւորեր և քովը գտնուած 6 մէճիտն առեր փախեր են

— Սամսունէ Սերասիա չինուելիք երկաթուղւոյն տեղերն քննելու պաշտօն ունեցող սպայք այս շաբթու մայրաքաղաքէս ուղևորեցան՝ գումարտակ մը այրուձիով։

— Զմիւռնիոյ մէջ վարժարան մը կը բացուի՝ Թուրքերէն, արաբերէն, գաղղիարէն, գերմաներէն, անգլիարէն, իտալերէն և յունարէն լեզուաց ուսման համար։

— Ի Տէլվինօ (Եանեայի նահանգ) 10 հոգի կասկած չուներէ խածատուելով՝ ևօթն քանի մ'օր ետքը մեռեր են, և միւսներն կ. Պոլիս ղրկուեր են առ ի դարման։

— Եանեայի մէջ երկու տարիէ հետէ հաստատեալ իտալական վարժարանք փակուեր են այս օրերս։

— Պրուսայի նահանգի Բիւրմասը գիւղաքաղաքի բանտէն վախած դատապարտեալներէն Արնաուտ Ահէմ, Պէչիր, Իսմայիլ և ուրիշ մը բռնուեր են, և միւսներն ալ ձերբակալելու ջանքեր կը լինին։

— Պայազիտի, Ալաշկերտի, Բասենիերու, Թորթումի և Բէյազիտի կողմերը 300 ղրշ. ամսաթոշակաւ պաշտօնեաներ կը գտնուին՝ կարնոյ նահանգի սահմանները անցնող մարդոց անցագրոց քննութեան համար։

— Ալեքսանդրիայէն լուր կուգայ թէ՝ անգլիական շոգենաւ մը Լոնտոնէն 200000 լիրա ելդիպտոս տարեր դրամատան մը յանձնելէ ետքը, և առ այժմ յայտնի չէ այս գումարին ինչու համար ղրկուիլը։

— Վանէն առ Թարիզ լրագիրըն կը գրեն թէ՝ այն աւազակը, որ յառաջագոյն սպանուած էին վանէն եկող ուղևորաց մին, երբ ղընկայի բանակին հրամանատար Զէքի փաշայի և Պայազիտի կառավարչին չանիւք յատկապէս ղրկուած մաս մը զօրաց միջոցաւ Բաղէշի նահանգի Մանազկերտ գաւառակի Սիւն-գարիւն գիւղի մէջ բռնուելուն, մէկ մասն՝ ողջ, և միւսն՝ սպանեալ, և կողոպտեալ բաներէն բաւական մաս մը երևան հանուելով՝ տէրերուն տրուեցան։

— Բրէչովայի (Դոսովայի նահանգ) հեռագրական և թղթատարական նախորդ տեսուչ Օսման Նուրի էֆէնտի պանդոկի սենեկի մը մէջ այրած մեռած լինելով՝ քննութիւն բացուեր է։ Պաշտօնավարութեանն ատեն հասութէն դրամ իւրացուցած և այլ զեղծմանց մէջ գտնուած լինելով՝ պաշտօնազուրկ եղեր, դատուեր բանտարկուեր և խորած դրամն վճարել դատապարտուեր է։ Ուստի կը կարծուի թէ յուսահատելով սպանած է ինքզինքն։

— Տոնեայի երևելիներէն Թահիր փաշայի ապարանքին մէջ պեղման մը ատեն հնութիւնք գտնուեր, և ի կ. Պոլիս կայսերական թանգարանը ղրկուեր են։

— Անթաքիոյ գաւառի Մագարպերս գիւղը մտնելով աւազակք, քանի մը գիւղացի սպաններ են, և Հալէպի ժանտարմայից պետն բաւական զօրութեամբ նոյն կողմն գնացեր է աւազակները ձերբակալելու համար։

— Ատանայի նահանգի Բայաս գաւառակի Ազիզիյէ գիւղին մէկին մը 4 արու զաւակ ծներ է, և ողջ առողջ են եղեր ծնողն ու ծնեալք։

— Տրապիզոնի կառավարութեան քարտուղարներէն Շէվկի էֆէնտիի սպասաւոր Յարութիւն բէվզիզէրը խառնելու ատեն, ղէնքը կրակ առեր և Յարութիւն վիրաւորուեր մեռեր է։

Պատառանքան, Ատրճան, Պաշտօն եւ Պարգեւ։ — Այրընի նահանգի կուսակալ անուանեցաւ Դասթամունիի կուսակալ Ալտիլլրահման փաշա։ — Պէրութի նահանգի Մէջթուլմէի կարգեցաւ Հասան Թայիզ էֆէնտի, որ յառաջագոյն ալ վարած է սոյն պաշտօնը։ — Պաղատաի կեդրոնական նախնական դատարանի պատժական ճիւղի նախագահ կարգեցաւ Ահմէտ Խուլուսի էֆէնտի, որ Համա կը գտնուէր սոյն պաշտօնով։ — Սանիյէի երկրորդ աստիճան՝ Տիարպէքիրի առևտրական սենեկի դերտնօրէն Յակոբ էֆէնտիի Դուլումճեան, և Խարբերդի Բեհլթէ գաւառակի Գայմագամ Մուսթաֆա էֆէնտիի։ — Ադրիանուպոլսոյ Ախթապոլու գաւառակի Գայմագամ անուանեցաւ Մարկըճըի Գայմագամ Սպի Րիզա պէյ։ — Տիարպէքիրի Ջերմուկ գաւառակի Գայմագամ կարգեցաւ Տիրէքի Գայմագամ Իպրահիմ Գատէմ էֆէնտի։ — Նոյն նահանգի Տիրէք գաւառակի Գայմագամ ընտրեցաւ Ջերմուկի Գայմագամ Իպրահիմ Էհէմ էֆէնտի։ — Երկրորդ աստիճանի Մէճիտիյէ պատուանշան՝ պետական Խորհրդոյ անդամներէն Սըտտիգ, Սպիզ և Սպի պէյերու։ — Զորրորդ աստիճանի Մէճիտիյէ պատուանշան՝ Կիպրոսի կառավարչի խորհրդականի Թարգման Թաղէոս Մոլտովան էֆէնտիի։ — Երրորդ աստիճանի Օսմանիյէ պատուանշան՝ Տրապիզոնի Օրտու գաւառակի Գայմագամ Մէհմէտ Ալի էֆէնտիի։ — Հինգերորդ աստիճանի Մէճիտիյէ՝ դրաւճառ Յարութիւն էֆէնտիի Նալպանտեան։ — Պետրսպուրկի օսմանեան հիւպատոս անուանեցաւ Րիֆաթ պէյ, որ Նովորոսքիի հիւպատոս էր։ — Պետրսպուրկի հիւպատոս Նէմիրա էֆէնտի՝ Նովորոսքիի հիւպատոս կարգեցաւ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 5 Հոկտեմբեր 1891

Օսմանեան Բանսօլիտէ . . . 19- 9
Րումմէլիի Երկաթուղի . Ֆրանգ 61-
Թրամուէյ . . . . Լ. Օ. 582-

Օսմանեան լիրան 100 ղրուշէն

Մէճիտիյէ	107-13
Մէճալիք	99-10
Հինգնոց	101-20
Վեցնոց	101-20
Րուպլի Թղթադրամ . .	8-72
Թասճիյէ	21-
Ռուսիոյ Բոլ	89-20
Գաղղիական լիրա . . .	87- 3
Անգլիական »	110-4
Դրամից	51-15

ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՄԿՐՏԻՉ ԵԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՂԲՕՐՑ

Վ. Ա. ՃԱՌՈՒՏՈՒՆԵՐ

Երկաթի, խուրտավարի, գործեաց եւ այլոց

Առ վաճառականս եւ գործակատարս Կ. Պոլսոյ, Անատոլուի եւ Րումելիի։

Ի դիւրութիւն վաճառականաց, արհեստաւորաց և գաւառացի յաճախորդաց՝ դարձեալ կը յանուցանեմք թէ, ի Կ. Պոլիս Մըսըրչարչըի դրան դուրսը Ալաճա-Համամ ճատուէ մեծ վաճառատուն մը, 44 թիւ, հաստատած եմք՝ Ղալաթա Բէրչէմլէ-պազար Մահմուտիյէ-Ճատուէի 70 և 59 թիւ վաճառատուներէ զատ։

Անգլիական՝ գաղղիական և ամերիկեան կարևոր գործարանաց բազմաց գործակատարութիւնն ըստանձնած լինելով՝ Ղալաթիոյ վաճառատանց մէջ կը գտնուին երկրագործական բազմազան գործիքներ, և ընկերութեանս մեքենագործն դիւրութիւններ կընծայէ նոցա գործածութեան ուսման համար։

Նաև՝ գործարանաց վերաբերեալ մեքենայք, թէ՛ պատրաստ և թէ յանձնարարութեամբ, և այլ զանազան տեսակ երկաթ, և ռուսական կախկախալակք (աստա քիլիա), հիւսան (տիւլկէր) գործիքներ, եկեղեցական զանգակք, խարտոց, զինկոյէ ամաններ, և այլն, և այլն։ Ամենքն ալ չատ ածան գներով։

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք չոյտ և կանոնաւոր կը կատարուին։ Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով Եւրոպայէ բերել կուտանք, և ուզուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք։

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Ց. Մուրատեան եղբարք
70-Եօրկանճըլար ճատուէսի-70
Կ. Պոլիս, Ղալաթիա

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Իտալիոյ զինուորական նախարարութեան պաշտօնական լրագիրն համարուղ էջերչիթօ յայտարարելով թէ ամէն վայրկեան հաւանական է որ պատերազմի տեղի տուող դէպք մը պատահի, խորհուրդ կուտայ որ ցամաքային ու ծովային զինուորութեանց նախարարութիւնք փութով զբաղին զինուորական պատրաստութիւնները լրացնելու գործով։ Իտալական ուրիշ լրագիր մ'ալ կըգրէ թէ ի Հռոմ զինուորական ակմբոց մէջ ո'չ նուազ մտատանջութեան պատճառ կը լինի՝ Միջերկրականի մէջ գաղղիական նաւատորմին ստուարանալ զօրանալը, և թէ այս պատճառաւ է որ Իտալիոյ ծովային նախարարն սպառազինած է պահեստի նաւատորմիղն, և Անգղիոյ հետ կը բանակցի իտալական կառավարութիւնն որ Անգղիա ալ աւելցունէ Միջերկրականի ծովային զօրութիւնը։

= Եւրոպիոյ ազգային խորհրդարանք ի մօտոյ կը բացուին հետզհետէ։ Կը կարծուի թէ կառավարութեանց ոմանց դաշնակցութեանց վերայ պաշտօնական տեղեկութիւն ստանալու համար երեսփոխանաց կողմանէ հարցմունք և հարցապնդմունք տեղի պիտի ունենան, մանաւանդ անգլիական խորհրդարանին մէջ։ Ցայտնի է թէ՝ Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ դաշնակցութենէն աւելի հետաքրքրական եղած է Գաղղիոյ և Ռուսիոյ վերագրեալ դաշնակցութիւնն, որ ըստ ոմանց արդէն կատարեալ իրողութիւն մ'է, և ըստ այլոց՝ տակաւին ի գիր առնուած և կնքուած չէ։

= Դարձեալ պնդողներ կան թէ Ռուսիոյ կայսրը մօտերս պիտի այցելէ ի Պերլին առ Կիյոմ կայսր։

= Ռուսիոյ կառավարութիւնը դեռ որ և է չարժում չընէր ընդդէմ չինական կառավարութեան, մինչդեռ տերութեանց ոմանց ազգու միջոցներ կը խորհին՝ յիշեալ երկրի մէջ եւրոպացւոց կրած ծանր հարստահարութեանց վերջ տալու և հարստահարելոց ու ղրկելոց համար մեծ փոխարինութիւններ ստանալու առաջադրութեամբ։ Միայն ռուսական լրագրաց ոմանց դիտողութիւնք կան թէ՝ ապաւինած են յայտնի Սիպերիոյ գտնուած երկաթուղիին, և երբ ուզեն՝ չնորհիւ նոյն ճանապարհին կրնան զինուորական մեծ զօրութիւն համախմբել չինական սահմանաց վերայ։

= Գաղղիոյ նախարարապետ և զինուորական գործոց նախարար Պ. Ֆրէյսինէ՝ ի Թուլոն, ուր գնացած էր ի քննութիւն ամրութեանց լանդրոյն, զօրավարաց և սպայից կողմանէ տրուած խընճոյքին մէջ՝ ի պատիւ ծովային ու ցամաքային զինուորութեանց՝ բաժակ քամեր է ըսելով -« Գաղղիա այժմ իւր բանակին վերայ ապահովութեան զգացումն ունի, զոր չունէր քանի տարիէ ի վեր. արդ կը տեսնէ լաւագոյն բազդի մը հաւատիքն և իրեն արժանաւոր դերից երաչխիքն. կը փափաքի խաղաղութեան, և դիտէ թէ խաղաղութեան ապահովագոյն միջոցն է կարօտ չլինիլ ուրիշի բարեհաճութեան, և խաղաղութիւնը վայելել իւր աղդած չարգանօք»։

= Մեքսիկայի սահմանաց վերայ բնակեալ հնդիկ ցեղք յանկարծ յարձակելով նոյն կողմերն հաստատեալ գերմանացի գաղթականաց վերայ, 200 հոգի ըսպաններ են, այր՝ կին ու տղայ։ Այս խժդժութիւնն ըրեր են կասկածելով թէ գերմանացիք պիտի գրաւեն իւրեանց հողերը։ Մեքսիկայի կառավարութիւնը զօրք ղրկեր է յիշեալ տեղը։ Կը կարծուի թէ Գերմանիոյ կառավարութիւնը պատասխանատու պիտի համարի զմեքսիկա։

= Իրլանտիոյ ինքնօրինական նաց հռչակաւոր պետ վախճանեալ Բարնէլի յուղարկաւորութեան հանդէսը կատարուեր է ի Տըպլին մեծաւ հանդիսիւ։ Դագաղը վեցձի կառօք գերեզմանատուն փոխադրուեր է իններկայութեան եւրևելեաց և բազմամբոխ ժողովըրդեան։ Բազում պակներ ու փունջեր ղրկուեր են երկրին նշանաւոր քաղաքներէն յատուկ պատգամաւորութեանց միջոցաւ։ Նոյն օրն յորդահոս անձրև կը տեղայ եղեր, բայց ժողովուրդն առ ոչինչ դրելով՝ մինչև գերեզմանատուն հետևեր է թափորին։ Այժմ չիյշուիր բարնէլի անձնական վարքն, որոյ պատճառաւ ո'չ սակաւ նախատանօք անուանարկեցաւ վերջին ժամանակներս, այլ միայն գովեստիւք կը յիշատակուին իւր հայրենասիրական չանքերն ու անձնուիրութիւնը։

= Ցրոյց կայ թէ Ա. Փլանիստանի էմիր Աբտուլրահման խան ի մօտ աւուրս պիտի այցելէ Անգղիա։

= Հռոմայ Պապը պիոս Թ. պատուանշանի կրան Գրուա աստիճանն ընծայեր է Կ. Պոլսոյ գաղղիական նախորդ դեսպան կոմս Մոնթէպէլլոյի՝ իւր պաշտօնավարութեան ատեն Արևելից մէջ պապականաց շահուն օգտակար հանդիսանալուն փոխարէն։

= Ի Ռուսաստան 5 դրամատուն 50000 րուպլի տուեր են ի նպաստ սովեալոց երկրին։

= Պետրսպուրկէ կը հեռագրեն թէ՝ Վոլկայի գերմանական գաղթականութեանց մէջ հնձոց տարապայման անյաջողութեան պատճառաւ տիրող սովին հետեւանօք 1000 անձինք ժանտատենդիւ հիւանդացեր են։

= Ի Փարիզ՝ ուր վերջին ժամանակներս օր ըստ օրէ կը յառաջադիմէ ռուսական եղբայրակցութիւնն, սոսկ գաղղիական դասի մը համար երկու կողմանց միեն փաստաբան կարգեր է Պետրսպուրկի հռչակաւոր ռուս փաստաբան Ուրուսով իշխանը։

= Անցեալներն հելլենական ջուրց մէջ ընկղմեալ թաօրմինա շոգենաւուն ուղևորաց 6 ին մարմիններն էյլին կղզւոյն եղերքը գտնուեր են Պիրէոնի ձկնորաց կողմանէ, և գրպաններէն բաւական դրամ գտնուեր է։

= Պուլղարիոյ մէջ ապահովագրական ընկերութիւն մը կազմուեր է Պուլղարիա անուամբ, և կանոնագրութիւնն՝ իշխանութենէն վաւերացեալ՝ հրատարակուեր է։

= Ռուսիոյ կառավարութիւնն որոշեր է աւելցունել՝ Թուրքիոյ մէջ ունեցած հիւպատոսութիւնները։

= Հեռագիրը լուր կուտայ թէ Եւրոպիոյ մէջ խահուէի գինեներն դարձեալ իջած են։

= Վիէննայի տպագրապետք յառաջիկայ ամառ տպագրական հանդիսարան մը բանալով՝ ի տես պիտի դնեն տպագրական արուեստին ի սկզբանէ անտի մինչև ցարդ ըրած յառաջադիմութեան բովանդակ արդիւնքն։

= Գարատաղի ելմտական նախարարն նկատելով որ այս տարի երկրին հունձքն անբաւական է, Օտէսայէն բաղում արմտիք գներ է, և ռուս չոգենաւով մը փոխադրել կուտայ։

= Ի Քիւվ կեղծ թղթադրամ րուպլիի գործարան մը յերևան հանուելը, և դրամանենգք բանտարկուեր են։ Նենգեալն հարազատին համանման է, և մեծ քանակութեամբ ղրկուեր է օտար երկիրներ։

= Փարիզի Գօգարա և Բըթի Նասիօնալ անուն լրագրաց տնօրէնք ի մենամարտ ելեր, և վերջինը վիրաւորուեր է։ Պատճառ եղեր է Գօգարտի մէկ ծանր յօդուածն ընդդէմ Բըթիի։

= Սուլթանա անուն անգղիական չոգենաւ մը Բաթանէզիայի կողմերն փոթորկի բռնուելով ընկղմեր, և նաւապետն ու 15 հոգի ծովասոյզ եղեր են։

= Ի Պէրլին երկրաչափաց համաժողով մը պիտի գումարի, ճանապարհները վտանգէ ու վնասէ ըստ կարելւոյն ազատ պահելու միջոցները խորհելու նպատակաւ։

= Հունգարիոյ կառավարութիւնը ջնջեր է՝ կարմիր ծովէն եւլած նաւուց համար սահմանեալ Քարանդինան։

= Պրազիլիոյ քաղաքամայր Բիօ-Եանէյրոյի իտալական թատրոնին մէջ չփոթութիւնք պատահեր և պատճառն անյայտ մնացեր է։ Ոստիկանութիւնը ձերբակալեր է բաղում մարդիկ։ Զիաւոր զօրքն փողոցները խռնեալ ժողովրդեան դէմ ղէնք գործածեր, և ոմանք սպանուեր և այլք վիրաւորուեր են։

= Գերմանիայէն տարւոյս ըսկիզբն մինչև Օգոստոսի վերջը 80610 հոգի յԱմերիկա և այլուր գաղթեր են։ Անցեալ տարի նոյնչափ ժամանակի մէջ գաղթողներուն թիւն է 63733։

= Գաղղիոյ նախորդ կայսրութեան եւգինէ 103910 ֆրանգի վաճառեր է Բաբիտ անուն անձնական զբօսանաւն։

= Կրացի (Աւստրիա) եղեւնադատ ատեանն հինգ տարի յառաջ մշտնջենաւոր բանտարկութեան վճիռ արձակած էր կրէկուար անուն անձի մը համար, դատելով զնա իբր մարդասպան։ Արդ կըսուի թէ՝ նորա անպարտութիւնն յերևան ելնելով, իսկոյն արձակուեր է բանտէն և 800 ֆիօրին նուիրուեր է կառավարութեան կողմանէ։

= Ի Բէչթա անցեալ կիւրակէ մեծ հրդեհ մը պատահելով՝ 300000 ֆիօրինէ աւելի վնաս եղեր է։

= Հանրածանօթ եղեքտրագէտ Լոխսընի նորագոյն հնարքներն են եղեքտրական զօրութեամբ երթևեկող թրամվայ, և ամենակարծր ժայռի վերայ մէկ վայրկեանի մէջ 3 ոտք խոր ծակ բացող եղեքտրական գայլիկոն մը (պուրղու)։

= Գաղղիոյ ծանօթ յեղափոխականներէն Ռոշֆոր, որ ի Պրիւսէլ գտնուեցաւ Պուլանժէի յաղարկաւորաց գլուխն, և որոյ համար հրատարակեցաւ թէ ժողովրդէն վահվահով (նուհա) այպանուած է, = Աժանս Հավասի հեռագրական գործակալութեան դէմ դատ բացեր է և 20000 ֆըրանգ կը պահանջէ իբր վնասարիւ ընդհուն ջնասուց, յայտարարելով թէ ժողովուրդն իւր դէմ այդպիսի վարմանց մէջ չէ գտնուած։

= Ի Միացեալ Նահանգս քաղաքի մը մէջ հետևեալ հետաքրքրական դատը տեղի ունեցեր է մօտերս։ Իլիա Հէվանս անուն մարդ մը Տիպլէս անուն սափրչի մը խանութ երթալով՝ կառաջարկէ ածիլել մորուքն. սափրիչն կըսկսի ածիլել, և միանգամայն խօսքի բռնուիլ, որպէս սովոր է իր արհեստակցաց բազմաց. պահիկ մը ետքը Իլիայի և Տիպլէսի մէջ խօսակցութիւնը կը տաքնայ, և Իլիա բերնէն կը թռցունէ սափրչին համար նախատական համարուած խօսք մը. սափրիչը կընդհատէ գործն, և դուրս կը հանէ մարդը՝ մորուքին մէկ մասն ածիլուած և միւս մասն տակաւին օճառի փրփուրներով պատեալ։ Ասոր վերայ ի դատարան կը դիմէ մարդը. կը լսուի ժողովրդեան մէջ, և մեծ բազմութիւն կը խռնի դատասրահը, այնպէս որ դատաւորք կը հարկադրին ընդարձակ տեղ մը երթալ այս դատին համար։ Դատավարութեան ատեն վկայից և վաստաբանաց խօսքերն ոչ միայն ունկնդրաց այլ և դատաւորաց քրքիջն կը շարժեն։ Դատարանը նկատելով որ սափրիչն իւր պայմանին հակառակ կիսատ թողած է մարդուն մորուքն ածիլելու գործն, և թէև Իլիա ալ նախատական խօսք արտասանելով տեղի տուած և հետևաբար յանցաւոր գտնուած է, բայց սափրչին ըրածը պայմանազանցութիւն է և Իլիա ջնասուած է նիւթապէս, = կը վճռէ որ սափրիչ Տիպլէս երկու տոլար տուգանք և դատական ծախքն վճարէ։

= Իտալիոյ Ալէքսանտրի քաղաքի մէջ աղնուական ընտանիքէ կին մը, գիշեր մը ամուսնոյն ի քուն եղած ատեն երկամեայ աղջիկ զաւակն պարտէզ կը տանի, փոս մը կը փորէ, մանկան բերանը հող կը լնու, որպէս զի արգելուի խեղճին շնչառութիւնը, և ողջ ողջ թաղելէն ետքը կը դառնայ յանկողինն։ Առաւօտուն ամուսինը չտեսնելով զաւակն, կնոջը կը հարցունէ ո՛ւր լինելը. կինն ի սկզբան կը յուզուի, և կըսէ թէ զաւակն նոյն գիշերը դրացիի մը տուն մնացած է. սակայն ամուսինը կասկածելով՝ երբ ստուգելու համար դուրս կելնէ, պարտիզին մէջ փորուած տեղ մը աչքին զարնելով՝ իսկոյն նոյն տեղը կը բանայ և կը գտնէ զաւակն, որ դեռ ի շունչ է եղեր, բայց քանի մը վայրկեան ետքը կանչնչանայ։ Կը կարծուի թէ կինը խելագարեր և այս խժդժական որդեսպանութիւնն ըրեր է։

ՍՅԼ ԵՒ ԱՅԼԲ

×× Ծիծաղեցուննող տունկ։ – Արաբիոյ մէջ կը բուսնի բակլայի սեռէն խոտ մը, որոյ հունտերը կը նմանին բակլայի, և զոր անգղիացիք կանուանեն «Ծիծաղեցուննող տունկ»։ Բնիկք կը վոչիացուննեն սոյն հունտերն և կը գործածեն փոքր քանակութեամբ։ Փոչին գործածողն կըսկսի պարել և ծիծաղիլ միշտ. այս վիճակը կը տեւէ քանի մը ժամ. երբ անցնի այդ զուարթութիւնն, նախ կը յաջորդէ թմրութիւն մը և ապա խոր քուն. մարդն երբ արթննայ քունէն, բնաւ չյիշեր թէ ի՛նչ ըրած է։

×× Մեծագոյն դրամք աշխարհի կը գտնուին Աննամի մէջ։ Կայ ոսկի դրամ, որոյ մէկ հատը կարժէ մինչև 1300 ֆրանք, և արծաթ դրամ՝ որոյ մէկ հատին արժէքն 600 ֆրանքէն աւելի է։

×× Ծովային զօրութիւնք։ – Եւրոպիոյ տէրութեանց ոմանց ծովային զինուորութեան վերայ հետևեալ ծանօթութիւնը կը տրուի։ Ռուսիա ունի 864 սպայ և 25474 զինուոր. Գերմանիա՝ 606 սպայ և 12000 զինուոր. Անգղիա՝ 1818 սպայ և 36832 զինուոր. Աւստրիոյ սպայք են 506, և զինուորք՝ 11880. Սպանիա յայսմ մասին յառաջադէմ քան զԱւստրիա, որովհետև ունի 839 սպայ և 14000 զինուոր. Գաղղիա Անգղիայէն ետքը նշանաւոր է 1776 սպայիւք և 36138 զօրօք. Իտալիոյ ծովային զինուորութիւնը կը բաղկանայ 736 սպայէ և 22400 զինուորէ։

×× Լոնտոն։ – Համառօտ վիճակագրութիւն մը հետաքրքրական եղանակաւ կը նկարագրէ այս ամենամեծ քաղաքին վիճակն։ 48 կառուրէ կայ Թայմզի վերայ ձգուած։ 76 թատրոն, 2200 հեռագրական և թղթատարական հաստատութիւնք՝ 15000 պաշտօնէիւք։ 544410 տուն. 1450 եկեղեցի, 2100 հիւանդանոց և այլ բարեգործական հաստատութիւնք. 7600 գարեջրատունք, 1800 սրճարանք, 570 պանդոկ. 3100 փուռ՝ 326000 այր և կին գործաւորօք։ Տարին կըսպառի 2200000 պարկ ալիւր, 260000 խոզ, 250000 կով, 8500000 որսի անասունք և թռչունք. 220 միլիոն ձուկն և 510 միլիոն ոստրէ։ Ի Լոնտոն Սկովտիացիք աւելի բազմաթիւ են քան յԷտինպուրկ, Իրլանտացիք՝ քան ի Տըպլին, Հռոմէականք՝ քան ի Հռոմ, և հրեայք՝ քան ի բովանդակ Պաղեստին։ 1500 հանրակառք կայ։ 1066 ին, Լոնտոնի բնակչաց թիւն էր 40000. այս թիւն մինչև 700000 բարձրացեալ տեսնուելուս 1700ին. հարիւր տարի ետքը (1800ին) մինչև 900000. իսկ արդ 4425000. համանականաբար՝ 1900ին պիտի լինի աւելի քան 5 միլիոն։ Բոլոր բնակչաց տարեկան ընդհանուր ծախքն՝ մէջէն հաշուով՝ 20 միլիոն անգղիական լիրա է։

××× Զուարճալիք

Պարտիզպան մը էշն հեծած՝ զպրոցի մը առջևէն անցնելու ատեն էշը կըսկսի ամենայն զօրութեամբ ղռալ։ Ի նոյն պահու, արձակուրդի ժամանակ լինելով տղայք վարժարանէն դուրս կելնէին. «Աւանա՛կ, կը պոռան պարտիզպանին երեսն ի վեր, էչի՞ր կրնար քիչ մը էշդ կրթել, որպէս զի այսպէս ամենուն առջև չը ղռար» – Ի՞նչ ընեմ, պարոննե՛ր, կը պատասխանէ պարտիզպանն՝ էշս իւր այսչափ ընկերաց գինքը դիմաւորելը տեսնելով՝ ուրախութենէն կերգէ. ինչո՞ւ արդեօք նորա խնդութիւնը։

Հայր մը որդւոյն հարցուց. «մեծ մա՞յրդ աւելի կը սիրես թէ չաքարեղէն։» Տղան սակաւ մի մտածելէ ետքը սկսաւ դառնապէս արտասուել։ «Ինչո՞ւ կուլաս, հարցուեցաւ իրեն։» Որովհետև, յարեց տղան հեծկլտալով, եթէ ըսէի աւելի կը սիրեմ մեծ մայրս, ստախօսութիւն մը պիտի ընէի. և եթէ ըսէի աւելի կը սիրեմ չաքարեղէնն, ինձ պիտի տրուէր խարազանի հարուած մը։

Տգէտ ոմն հանճարաւոր մարդու մը ականջաց երկայնութիւնը կը ծաղրէր. «Իրաւ է ըսաւ մարդն, ականջներս քիչ մը խոշոր են մարդու մը համար, բայց սէտք է դու ալ ճչմարիտը խոստովանիս որ քունկիններդ ալ յոյժ փոքր են էշու մը համար։

Դիոգինէս օր մը արճաններէն սառկ կը մուրար. – Ի՞նչ կընես հարցուցին ականատեսք. – Ի՞նչ պիտի ընեմ, ըսաւ, մերժողական պատասխան լսելու վարժութիւն կընեմ։

Նամակներ առ երիտասարդս. – Դիտքոմ ամերիկացւոյ օգտաւէտ գրուածոյ մէկ մասն է՝ ի հայ թարգմանեալ։ Ութ նամակք, յորոց կան հասուն խորհրդածութիւնք, կարևոր տեսութիւնք և պատուական խրատք՝ կենաց մէջ պատուաւոր յաջողութիւն ստանալու և ընկերութեան մէջ արդիւնաւէտ և կորովի գործոնէութեամբ յարգելի դիրք մը շահելու պայմանաց վերայ։ Շատ ընտիր են նաև տպագրութիւնն ու կազմն. գինը 5 ղրուշ. ամէն գրավաճառաց քով կը գտնուի և կեդրոնատեղին է Աբամեան տպարանը։

Նահակներ առ նորապսակ առուսիս։ – Այս ևս յիշեալ բարոյախօս ամերիկացւոյն շահաւէտ գրուածոց մէկ մասն է՝ ի հայ վերածեալ։ Դարձեալ ութ նամակք, որովք նորապսակ ամուսնացելոց գործնական միջոցներ կըցուցնէ՝ ամուսնական կեանքն ըստ կարելւոյն հանդուրժելի, հաճելի և արդիւնաւոր ու բարեբաստիկ ընծայելու համար։ Առաջնոյն նըման ընտիր տպագրեալ ու կազմեալ է, և գինն է 5 ղրուշ։

Կը փափաքիմք որ այս գիրքերէն մէկ մէկ հատ գտնուի ամէն հայ տան մէջ, և յաճախ կարդացուի ուշի ուշով։ Գինն է 8 ղրուշ։

Առեւտրի Տնտեսութիւն։ – Ըստ րինեց Մ. Մամուրեան։ Վաւերացեալ յՕսմանեան Խորհրդոյ աղգային կեդրոնական վարչութեան։ Դասագիրք մը՝ որ կը խօսի Տան բարոյական ու նիւթական կազմաւորութեան, Պետոյից և Առողջապահիկ միջոցներու վերայ։ Շատ պիտանի է մեր առտնին անկերպարան կենաց բարւոքման համար։ Կը փափաքիմք որ ո՛չ միայն աղջկանց վարժարանաց այլ և ամէն տանց մէջ մուտ գտնէ սոյն գիրքն, և յաճախ կարդացուի ուշի ուշով։ Գինն է 8 ղրուշ։

Օսմանեան կայսերական Պանքան գրասենեակ մը բացած է ի Բերա, Մեծ փողոց, թիւ 8։ Այս մասնաճիւղ պիտի ղբաղի սեղմաւորական հետեւեալ գործերով. – Դրամոց փոխոխում՝ օրուան գնով. – Զէքերու վաճառում Թուրքիոյ և Եւրոպիոյ գլխաւոր քաղաքաց վրայ, հրապարակի լսւագոյն գներով ու պայմաններով. – Ընթացիկ հաշուոց բացում. – Փոխատուութիւնք հանրային արժէքներոց վրայ. – Առանձի գումարաց ընդունելութիւն պայմանաժամով. – կարողներու և փոխանակագրոց գանձում։



ՓՈՒՆՋ ԳԻՏԱԿԱՆ

Գրեց

ՏՕՔԹՒՕՐ Կ. Յ. ՓԱՇԱԵԱՆ

Բովանդակութիւն։ – Ա. մասն՝ Քուն, երազք, Խըպլուկ, Մարգարէական կամ Բազդագուշակ երազներ, Փնաշրջութիւն, Համակրութիւն և Հակակրութիւն։ Բ. մասն՝ Սիրոյ գիտական բացատրութիւնը, Գաղտիական ախտի ծագումը, Թունաւորումն։ Գ. մասն՝ Առողջապահական յօդուածք սովորութեան, մտային կարողութեան, մտաւոր արհեստից և ոգելից ըմպելեաց գործածութեան վրայ։ Գին 5 ղրուշ։ Կը գտնուի բոլոր Հայ գրավաճառաց քով. կեդրոնատեղին է նշան Կ. Պէրպէրեան էֆէնտիի տպարանն, Կ. Պոլիս, Էսկի Զապթիյէ ճատտէսի, թիւ 63։

Հրատարակեցան 16-17դ. թերթերն Գափամաճեան Սիմոն էֆէնտիի Հայ լեզուի Բառարանին։ Բաժանորդագինն է՝ 15 ղրշ։ Դիմել առ հեղինակն՝ ի Կ. Պոլիս, Էսկի-Զապթիյէ, Պէրպէրեան տպարան։

PILULES HOLLOWAY
ԴԵՂՍ.ՀԱՏՔ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամէն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահաբը, և ամէն Ջրային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար։ Կը ջնջէ և անհետ կընէ ամէն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սբա, ոի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանդարեալ վիճակը կը կանոնաւորէ և դրդռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւնները, որովայնի մէջ ցուած կապեր, գլխի ցաւեր կվանէր մարսողութիւնը կչափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կզգենու։

ONCUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն և վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհասաւարիր ըզնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրիփեճէճ), սրունկից և ասեանց վէրքեր կա՛մ բոլորովին կանցնին և կա՛մ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօդացաւ (եհլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (ըրաձա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կը գտնուի ամէն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պաղչէ-գարու Թաշ-խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, թիւ 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ոօքթօր Հոլլօու, ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց թիւ 533։

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՁԱՁԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԻՐԵԱՆ
Կ. Պոլիս Զիչէք-բազար թիւ 23